ԿԱՐԾԻՔ

Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցում» խորագրով թեկնածուական ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հայաստանի Հանրապետության կրթական բարեփոխումների ներկա ժամանակաշրջանում ԿԱՊԿՈՒ երեխաների հանրակրթական ուսուցման կազմակերպումը գերակա խնդիր է, որի արդյունավետությունը պայմանավորված է շատ գործոններով:

Ներառական կրթությունը՝ կրթական քաղաքականության զարգացման կարևորագույն ուղղություն է, որի նպատակն է՝ առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթության հասանելիության ապահովումը, ուսումնական գործընթաց ներգրավումը, հասարակության մեջ ինտեգրացումը:

Նման երեխաների անհատական կարիքների գնահատումը և կրթության գործընթացին ակտիվ մասնակցությունը ենթադրում է բազմամասնագիտական անձնակազմի աջակցություն, համապատասխան ձևերի և մեթոդների ընտրություն ու կիրառում, որը կնպաստի ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրմանը կրթական գործընթաց, սոցիալական շփման ընդլայնմանը: Վերընշված հիմնախնդիրների լուծումն ունի կարևոր մանկավարժական և սոցիալ-հոգեբանական նշանակություն:

Զ. Հարությունյանի ատենախոսական աշխատանքում փորձ է արվել ներառական կրթություն իրականացվող հաստատություններում ներդնել էրգոթերապևտիկ միջամտության մոդել:

Ատենախոսությունը բաղկացած է՝ ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն պարունակում է 10-ը աղյուսակ, 23 տրամագիր, 1 գծապատկեր, 2 նկար և 7 հավելված, ներկայացված է համակարգչային 166 էջի վրա:

Առաջին գլխում հայցորդը ներկայացնում է այն գիտամեթոդական գրականությունը, որը թույլ է տալիս պարզաբանել հիմնախնդրի ուսումնասիրման

աստիճանը, հստակեցնել աշխատանքի նպատակը, օբյեկտը, ուրվագծել սեփական հետազոտության հիմնական ուղղությունները:

Հայցորդի կողմից կատարված գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը և վերլուծությունը թույլ տվեց վեր հանել ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական գործընթացում ներգրավվելու մի շարք հիմնախնդիրներ: Բացահայտվեց նաև խոչընդոտների այն շրջանակը, որը թույլ չի տալիս ԿԱՊԿՈՒ երեխաներին հաճախել հանրակրթական դպրոց:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը ներկայացրել է ԿԱՊԿՈՒ սովորողներին ցուցաբերվող էրգոթերապևտիկ միջամտության համալիր մոտեցումների ուսումնասիրման արդյունքները:

Հայցորդը կատարել է մեծածավալ հետազոտություն. անցկացրել է դասապրոցեսի դիտարկում, հարցազրույց՝ ուսուցիչների և ուսումնաօժանդակ անձնակազմի հետ, հարցաթերթիկային հարցում: Ուսումնասիրել և վերլուծել է ներառական կրթության կազմակերպման ընթացքում առկա խնդիրները, միջավայրային նպաստավոր և խոչընդոտող պայմանները: Հետազոտության ընթացքում գնահատվել են ԿԱՊԿՈՒ սովորողների կարողությունները տարբեր պայմաններում՝ կրթական գործընթացում մասնակցության աստիճանը, ուսումնական ծրագրի յուրացման առանձնահատկությունները, ներգրավվածություն արտադասարանական միջոցառումներին և ինքնուրույն մասնակցությունն անհատական խնամքի գործողություններում:

Նախնական ուսումնասիրությունների արդյունքում հեղինակի կողմից առաջարկվել է էրգոթերապևտիկ միջամտության ռազմավարական պլան և մշակված ծրագրին համապատասխան մոդել:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են ներառական կրթություն իրականացնող դպրոցներում էրգոթերապևտիկ միջամտության մոդելի ներդրման արդյունքները: Մեկամյա մանկավարժական գիտափորձի արդյունքները հաստատեցին հետազոտության վարկածը և արձանագրեցին դրական փոփոխություններ՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական գործունեության մեջ ինքնուրույն մասնակցություն ունենալու գործում:

Հեղինակը լիովին լուծել է հետազոտության առջև դրված խնդիրները, որոնք արտացոլված են եզրակացություններում:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գործնական նշանակությունը՝ հարկ է նշել նաև աշխատանքում տեղ գտած որոշ թերություններ և բացթողումներ.

1. Հեղինակը, ներկայացնելով ԿԱՊԿՈՒ երեխաների էրգոթերապևտիկ միջամտության անհրաժեշտությունը, չի ընդգծում կինեզիոթերապիայի հետ կապը և համատեղ գործունեության կարևորությունը: Հարկ է նշել նաև, որ հայցորդը, հիմնվելով սեփական հետազոտության և անցկացված հարցման արդյունքների վրա, ներկայացնում է ներառական կրթություն իրականացնող դպրոցներում աշխատողների բազմամասնագիտական կազմը, որտեղ ներառված չեն ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետները:
2. Զ. Հարությունյանը ուսումնասիրել է ԿԱՊԿՈՒ սովորողների 3 խումբ՝ հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող, մանկական աուտիզմով, ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշով, որոնք իրենց խնդիրներով և կարողություններով էականորեն տարբերվում են միմյանցից, ինչը պահանջում է տարբերակված մոտեցում ցուցաբերել էրգոթերապևտիկ միջամտությանը: Բնականաբար, նրանց կարողությունները, ֆունկցիոնալ շարժունակության մակարդակը տարբերվում է: Ցանկալի կլիներ, որ հեղինակը, ներկայացնելով էրգոթերապևտիկ միջամտության ընդհանուր մոդելը, ընդգծեր բովանդակության և առաջարկվող մոտեցումների առանձնահատկությունները:
3. Ինչպես է հիմնավորում հեղինակը հետազոտվողների տարիքային ընտրությունը /4-5-րդ դասարանների հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող սովորողներ, 6-8-րդ դասարանների մանկական աուտիզմ ունեցող երեխաներ, 4-6-րդ դասարան՝ ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշ ունեցողներ:

   Նպատակահարմար չէր լինի էրգոթերապևտիկ միջամտությունը սկսել դպրոցում սովորելու հետ մեկտեղ, ինչն անմիջապես կանդրադառնար ուսումնական, հաղորդակցման արդյունավետության վրա:

4. Պարզաբանման կարիք ունեն 7-10-րդ աղյուսակները (էջ 130, 135, 139, 142-143), որտեղ ներկայացված են ստուգողական և փորձարարական խմբերում ընդգրկված ԿԱՊԿՈՒ սովորողների ցուցաբերած արդյունքները, որոնցում առկա են բաց վանդակներ (փորձարարական խմբում մինչ գիտափորձի ցուցանիշները):
5. 6-րդ եզրակացությունում հեղինակը նշում է, որ ներառական կրթության իրականացնող դպրոցներում էրգոթերապևտիկ համալիր մոտեցումների յուրահատուկ մոդելի կիրառման շնորհիվ 36%-ով բարելավվել է ԿԱՊԿՈՒ սովորողների մասնակցությունը կրթական գործընթացում և ամենօրյա զբաղվածության գործողություններում: Արդյո՞ք, ներկայացված տոկոսային ցուցանիշը արտացոլում է ընդհանրացված արդյունքը:
6. Տեքստում առկա են որոշ վրիպումներ և տերմինաբանական անճշտություններ. այսպես՝ 40-րդ էջում հեղինակը գրում է. «... լրացուցիչ խնդիրների լուծումը և նշում՝ հատուկ գրականության ուսումնասիրում և վերլուծություն», այն մեթոդ է, ոչ թե խնդիր: 80-րդ էջում նշված «ղեկավարելի շարժումներ» բառակապակցության փոխարեն անհրաժեշտ է օգտագործել «կառավարելի շարժումներ»: 56-րդ էջում շարադրվում է. «վնասվածքներ, տրավմաներ», որոնք նույն իմաստն ունեն:

   17-18-րդ տրամագրերում նշված տոկոսների արժեքը չի համապատասխանում ներկայացված պատկերներին:

   Սակայն նշված նկատառումները և որոշ վրիպումներ չեն նվազեցնում կատարված հետազոտության գիտական արժեքը, գործնական նշանակությունը:

   Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և լիովին արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցում» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական

աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (Հատուկ մանկավարժություն) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ե. Ս. Հակոբյան

Ե.Ս. Հակոբյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
ՀՖԿՍՊԻ-ի գիտական քարտուղար,
դոցենտ՝ Մ.Ռ. Ասատրյան

28 նոյեմբերի 2019թ.